

## ՀՈԲԵԼՅԱՆԱԿԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

### ՇԻՐԱԿԻ ԹԵՄՈՒՄ

#### ՀԱՆԺԱՐԵՂ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՀԵՏ

Հայ ժողովորդը գիտի արժանին և պատշաճը մատուցել իր այն զավակների սուրբ հիշատակին, ովքեր բոլորանման կյանքով ծառայել են ազգօգուտ նպատակների: Լուսով, չերմությամբ առկեցուն նրանց հիշատակը ապրող և գալիք սերունդների մի կենդանի վկա է, անսահման բարու, գեղեցիկի մի վեճ տիպար: Ուրեմն և նրանց լարուն, կենաչող կյանքի անման հիշատակի ոգեկոչումը մեր՝ ապրողներին սրբազն, նաև պարտադիր կատարելի պարտականությունն է: Մեր ժողովուրդը ներքին մի վեճ զգացումով, սրտողով գլուխ է խոնարհում անցյալի այն պայծառաշուր անունների խնկելի հիշատակի առջև, ովքեր մտքի, լուսավորության, մշակութի, հավատի ու հիմքի հանդան և իրենցով լույս ու չերմություն սփոռեցին ամենորեք: Փայլատակող հանճարների մեր անման գործիչների շքեղաշուր անդաստանում իր փառավոր և արժանի տեղն ունի երանելի Հայրապետը՝ Ներսես Շնորհալին, նաև, որ իր հոգաբաթավ աղոթքներով մեր սուրբ ժամագրքի անքակտնի ոգին ու մասն է, նաև, որ գիտեր մանկան, մանուկների սրտին ու մտքին արժանի երգեր գրել, նաև, որ երածտությամբ էլ բանաստեղծ էր, բանաստեղծելով էլ՝ երգահան, նաև, որի աստվածատոր ձայնը քանի քանի ունենուի հիշների ականջն է շոյել ու իրենով լցրել, նաև, որ գիտեր մեր քրիստոնադաւան եկեղեցուն արժանին մատուցել և հանուն նրա պատշաճ ծառայություն, կարգ ու կանոն պահանջել բարձրաստիճան և ցածրաստիճան հոգևորականներից: Ո՞րը թվել: Հանճարեղ Հայրապետի սուր աշքը, սուրբ Աջք հասել են ամենուր, որ պետք է լիներ հայի ոգին, տվել անմենացրդ կերպով իր պայծառ մտքի փայլատակումները, տվել

համուն մեր ժողովրդի, մեր լույս հավատի, բնավ պատմությունից չակնկալելով հատուցում և, մանավանդ, փառք: Այդ մենք՝ նրա հետնորդներն ենք, որ արժանի դափնեպասակ ենք դնում նրա անման անվանը, հապատ անսահմանորեն, որ երանելի Ներսես Շնորհալին մեր բազում հանճարներից մեկն է:

Եվ մեր ժողովուրդն անսահման սիրով ու երախտագիտությամբ ընդունեց Ն. Ս. Օ. Տ. Վազգեն Ա.-ի ս/թ հունվարի 16-ի № 743 սրբատա կոնդակը, որով մեր հեռատես Հայրապետը 1973 թ. հայտարարեց Ներսես Շնորհալին նվիրված հորելյանական տարի:

Շիրակի ժողովուրդն անսահման սիրով ու բերկրաներով ընդունեց այդ կոնդակը, միշտ ակնկալ, որ Շիրակի թեմը և նրա առաջնորդանիւտ ա. Աստվածածին եկեղեցին հավոր պատշաճին տոնելու են հայց հանճարեղ Հայրապետի մահվան 800-ամյա հորելյանը:

Եվ ահա 1973 թ. դեկտեմբերի 9-ին, կիրակի օրը, Լեճինականի ա. Աստվածածին եկեղեցում, հանդիսադրությամբ Շիրակի թեմ մի բարեշան առաջնորդ տ. Նարեկ նայ. Շաքրյանի, խանդավան և ոգեշունչ մթնոլորտում տոնվեց Ներսես Շնորհալու մահվան 800-ամյակը: Օրվա պատարագիչն էր տ. Կարապետ քահանա Քելամյանը: Եկեղեցին լեփ-լեցուն էր հավատացյաներով, բազմաթիվ մոռավորականներով: Վեհաշունչ պատարագի ընթացքին, «Հայր մեր»-ից առաջ, ու Սեղան է բարձրանում արժանապատիկ տ. Արամ ավագ քահանա Բոյաջյանը և «Արդարությամբ մի դասիր, այլ գլուխյամբդ ներիր» Շնորհալուց վերցված բնաբանով սկսում իր բարողը: Նա համառոտակի նշում է Հայրապետի անցած կյանքի պայծառ ճանապարհը, մասնավորաբար բնդգծելով այն մեծ ծառայությունը, որ Ներսես Շնորհալին մատուցել է հայ եկեղեցուն, բանաստեղծա-

կան-երաժշտական արվեստին: Քարոզիչը թվարկում է այն բարեմասնությունները, որոնցով օծոված էր «...միջնադարյան մեծագոյն բանաստեղծ, մատուցագիր, հայոց եկեղեցու անզուգական շարականների և բազմաթիվ հոգախառն աղոթքների հանձնարել հետինակ, հրապարակախոս, երաժիշտ, մանկավարժ Ներսես» Դ Կայեցին՝ Ընորհավիճ: Այսուհետև քարոզիչը մեկնարանում է հրա բարյան-իրատական հայցքները: «Ողքան առաքինություններով է զարդարված մարդը, այնքան պայծառ ու շողշողուն են իր մեջ բնակվող Լուսի ճառագայթները»: Լուս... Որչա՞փ և քանի՞ց շուփարանեկ է Ընորհավիճ մարդկային հոգու լուսը: Վկան՝ հրա բազմաթիվ բանաստեղծություններն են և, մանավանդ, «Լուս, Արարիշ լուսոյ, առաջին լոյս» բանաստեղծությունը և «Առաօտ լուսոյ» տաղը, որ այնպիս սիրում է մեր ժողովուրդը: «Ճարևելից մինչ ի մոտս», «Ծգնառը Աստուծոյ», «Լուս, Արարիշ լուսոյ, առաջին լոյս», «Ճանապարհ և ճշմարտութիւն և կեանք Քրիստոս», «Ընորհեա, մեզ Տէր» շարականներն ու երգերը:

Սպասաբորդ սրբազն հոր գիշավորությամբ հոգևոր դասը միաբերան ընթերցում է «Հաւատով խոստովանիմ»-ը. միանում է հավատացյալ ժողովուրդը, եկեղեցին ասես շնչում է Ընորհավիճ: Սրանչելի հանդիսությանը մեծ շուրջ է հաղորդում եկեղեցու քառաձայն երգչախումբը, որը հոգեպարար վեհությամբ առաջին անգամ կատարում է Ն. Ընորհավու «Նորահրաշ» սրբանելի երգը:

Կիրակնօրյա այդ մեծ հանդիսությունը վեհ ներշնչանքով լորեց բոլոր մասնակիցների սրտերը. ապրեցինք Հայոց հանճարեղ Հայրապետի հետ վայելքի անմոռանակի պահեր:

#### ՈՒՄԱ ԿԻՐԱԿՈՒՅՑԱՆ

Ք. Լենինական

#### ՊՈԽԿԱՐԱՀԱՅ ԹԵՄԻ ԿՅԱՆՔԵՆ

Պովկարահայ եկեղեցական թեմը բավական աշխայք գործուենություն վարած է տարվա ընթացքին:

Թեմի եկեղեցիներուն մեջ տոնվեցան բոլոր տերուական տոները և գլուխվոր սուրբերու օրերը:

Հայոտ Ամենայն Հայոց Վեհափառ կաթողիկոս Վազգեն Ա-ի սրբատա կոնդակին, բոլոր եկեղեցիներուն մեջ տոնվեցան հայ եկե-

լեցվող եռամեծ Հայրապետ և Ներսես Ընորհավիճ մահվան 800-ամյակը, պատշաճ հանդիսավորությամբ: Քահանա հայրերը պատրաստ ասեն կարդացին Վեհափառ կայողիկոսի կոնդակը եկեղեցվող բեմուն ու մասնակիոր քարոզներով վեր հանեցին Ընորհավիճ ճոխ վաստակը և խանկագին ծառապորտումը հայ եկեղեցիին, գրականության ու արվեստին: Կատարվեցան Ընորհավիճի հայունի շարականներն ու տաղերը՝ «Առաօտ լուսոյ», «Զարթուցեալք», «Նորահրաշ», «Սիրնի որդիք» և որիշներ:

Ընորհավիճ հիշատակը հարգվեցալ հոյնական պովկար ողղափառ եկեղեցվող հոգևոր ակադեմիայի ուկտոր գեր. Նիկոլայ եպիկոպոսի հախաձեռնությամբ: 15 դեկտեմբերի 1973-ի շաբաթ կեսօրեն առաջ հոգևոր ակադեմիայի 4-րդ կուրսի ուսանողներուն սուջ գերաշնորհ Նիկոլայ եպիսկոպոսի խուցավ հայ եկեղեցվող դավանաբանական դիրքի մասին:

Ավելի ու ակադեմիայի ուսանողական դասախոսական կազմին սուջ գեր. ուկտորը բովանդակալից դասախոսությամբ վեր համեմ Ընորհավիճի գործը որպես եկեղեցական գործիչ, բանաստեղծ, մատենագիր, երգահան ու տղղասաց:

Ուսումնական գործությունը կատարությունը ուսուերեն թարգմանութենան պովկարերենի վերածված Ընորհավիճի ստեղծագործություններեն արժեքավոր կտորներ արտասեղացան ուսանողներու կողմեն, իսկ ակադեմիայի երգչախումբը խիստ ներշաշնչական երգեց «Սիրնի որդիքը» պովկարերեն:

Հավաքույցին հրավիրված էին պովկարահայ թեմական խորհուրդի և Սոֆիայի եկեղեցական վարչության ներկայացուցիչներ, դպրության և Սոֆիայի հոգևոր հովիկ տ. Մեսրոպ քահանա Պեղյան:

Հանդիսության համագահող գեր. Նիկոլայ եպիսկոպոսի հրավերով թեմական խորհրդու ատենապետ արք. Օննիկ Ապահնան ընդգծեց Ընորհավիճ ճոխ և ծավալուն գործուներուն՝ նշելով, որ Ընորհավիճ կներկայան նոյնական միջնեկեղեցական էկումենիկ շարժման առաջին նախաձեռնողներեն մին, ո շնորհակալություն հայունեց հանդիսության նախաձեռնող գեր. Նիկոլայ եպիսկոպոսին:

Տ. Մեսրոպ քահանա երգեց Ընորհավիճ հայունի ստեղծագործություններեն կտորներ:

Սոֆիա

ԻՐԱԶԵԿ

